

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում հյուրընկալվել էին Լեհաստանի Էկոլոգիայի քաղաքացիական ինստիտուտի ներկայացուցիչները

29.09.2012



Երեկ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում հյուրընկալվել էին Լեհաստանի Էկոլոգիայի քաղաքացիական ինստիտուտի ներկայացուցիչներ, ովքեր մարզի Աղավնաձոր, Արենի և Արփի համայնքների դպրոցների աշակերտների հետ իրականացնում են շրջակա միջավայրի բուսական աշխարհի ճանաչման, գնահատման և գենոբանկի ստեղծման ծրագրեր:

Հյուրերը մարզպետ Էդգար Ղազարյանին ներկայացրին ծրագրի աշխատանքների հետ կապված մի շարք մանրամասներ:

Մարզպետը ողջունեց և հավանություն տվեց ներկայացված ծրագրերին և շնորհակալություն հայտնեց բնապահպանական օգտակար նախաձեռնության համար: